ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Միկրո ծրագրի վերնագիրը: «Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում»

Միկրոծրագրի համարը: AFT-SH-01

Մշակվե՞լ է արդյոք բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ)

Այո + Ոչ -

ԲՍԿՊ-ում նկարագրված են արդյո՞ք հնարավոր բոլոր ազեցությունները և դրանք մեղմացնելու համապատասխան միջոցառումները:

Այո + Ոչ -

Բնապահպանական և սոցիալական գնահատման վերջնական եզրակացություն

Եզրակացություն	
Ենթածրագիրը մերժվել է	Ենթածրագիրը հաստատվել է (բնապահպանական և սոցիալական գնահատումն ավարտված է)
	+

ՄԱՍ Ա: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ	
Երկիրը	Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)
Ծրագրի անվանումը	Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
Ենթածրագրի անունն ու վերնագիրը	AFT-SH-01 «Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի կառուցում»
Համայնք	Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայր
Ծրագրային աշխատանքների շրջանակը	Սույն ենթածրագրով նախատեսվում է կառուցել նոր մանկապարտեզ, քանի որ ներկայումս այն գործում է համայնքապետարանի շենքում: Շինարարության համար անհրաժեշտ տարածքը կազմում է 3882.4 մ^2: Նախագծի համաձայն, կառուցապատման մակերեսը կազմում է 1292 մ^2, որից նկուղային հարկ՝ 216 մ^2, առաջին հարկ 544,8 մ^2, և երկրորդ հարկ՝ 532 մ^2 : Կանաչապատման համար նախատեսված տարածքը կազմում է 1588 մ^2. Սույն ծրագրով կառուցվող մանկապարտեզի համալիրը բաղկացած է երեք մասնաշենքերից, մեկը վարչական՝ մյուս երկուսը՝ կրթական: Մասնաշենքերը տեղակայվելու են կողք կողքի: Համալիրի վարչական շենքը կունենա 15,0x9,0մ առանցքային չափերով ուղղանկյունաձև ուրվագիծ, ուսումնական մասնաշենքերը ևս կլինեն ուղղանկյունաձև՝ համապատասխանաբար 12,0x12,0մ և 18,0x12,0մ առանցքային չափերով: Շինարարական աշխատանքները կներառեն հետևյալը **<u>Բակի տարածք:</u>** -Սալարկումը նախատեսվում է անել բրեչկա տիպի բազալտե սալերով՝ հատակի մասում ջրամեկուսացմամբ: - Նախատեսվում է մետաղական նոր կոնստրուկցիաների և սարքավորումների տեղադրում, այդ թվում նաև վարժություններ կատարելու հարմարանքներ, նստարաններ, ծածկեր, ցանկապատ աբղամաններ և այլն: - Պլանավորված են կանաչապատման աշխատանքներ՝ ներառյալ սիզամարգի աճեցումն ու դրենաժային համակարգի անցկացումը: - Չորս տաղավարների կառուցում՝ երեխաների ժամանցն ապահովելու համար: - Նոր աստիճանավանդակի և թեքահարթակների կառուցում: **<u>Շենքերի նախագծում</u>** Վարչական շենք - Առաջին հարկ՝ սրահ, բուժ. կետ, լվացքատուն, խոհանոց և մառան -Երկրորդ հարկ՝ սրահ, վարչական սենյակ, հանդիսությունների սրահ Կրթական մասնաշենք 1: - Առաջին հարկ- սրահ, խաղասենյակ, հանդերձարան, ճաշասենյակ, սանհանգույց և ննջասենյակ -Երկրորդ հարկ- հանդերձարան, խաղասենյակ, ճաշասենյակ, սանհանգույց և ննջասենյակ Կրթական մասնաշենք 2: -Առաջին հարկ- սրահ, հանդերձարան, խաղասենյակ, ճաշասենյակ,

	սանհանգույց և ննջասենյակ -Երկրորդ հարկ- օժանդակ սենյակ, սանհանգույց՝ անձնակազմի համար, տեխնիկական սենյակ, հանդերձարան, խաղասենյակ, սանհանգույց և ննջասենյակ Մանկապարտեզի կրող պատերը նախատեսվում է կառուցել երկաթբետոնե միաձույն շրջանակներով: Շենքերի տանիքները ևս կլինեն միաձույլ երկաթբետոնից: Տեխնիկական մասնագրերի համաձայն, շենքերի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել չորրորդ փողոցի երկայնքով անցնող ջրագծից: Կառուցվող ջրագծի երկարությունը (d=50մմ) 53մ է: Կեղտաջրերի հեռացումը կիրականացվի կենսաբանական հավաքման կայանի միջոցով (Տոպազ-150): Ավազի և մանրախճի շերտի ավելացմամբ, դրենաժային բաց հորի միջոցով հոսող կեղտաջրերը ենթարկվում են հավելյալ մաքրման, որից հետո միայն ներծծվում են հողի մեջ: Շենքերի ջեռուցումը կիրականացվի գազով աշխատող կաթսաներով: 175մ. երկարությամբ կառուցվող գազի խողովակաշարի կառուցումը պլանավորվում է իրականացնել չորրորդ փողոցի վրա գտնվող գազի վերգետնյա խողովակաշարից: Մանկապարտեզը նախատեսված է 4 խմբի համար, ընդհանուր առմամբ 100 սանով:		
Կառուցվածքային կարգավորումներ (ԿԿ)	Խրագրի ղեկավար Իվան Դրաբեկ	Բնապահպան — Լուսինե Գևորգյան Սոցիալական – Դավիթ Ջիջելավա	
Կատարողական կարգավորումներ (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն ՀՏՋՀ Բնապահպան - Ասյա Օսիպովա Սոցիալական - Քնարիկ Գրիգորյան	Աշխատանքների վերահսկող ԱԳԵԱ ՍՊԸ	Աշխատանքների կապալառու Անդրեաս և Ընկերներ ՍՊԸ
ՏԵՂԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ			
Վայրի անվանումը	Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզ		
Վայրի հասցեն	Հասցեն: Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Նոր Կյանք բնակավայր, 4-րդ փողոց, հողամաս 11		
Ով է հողի սեփականատերը?	Նոր մանկապարտեզի համար առաջարկվող հողամասը (կադաստրային կոդ՝ 08-087-0033-0020) համայնքի սեփականությունն է հանդիսանում: Հողամասի ընդհանուր տարածքը 0.38824 հեկտար է: Հողամասը որևէ մասնավոր նպատակով չի օգտագործվում: Շինարարության ընթացքում մասնավոր հողատարածքներ չեն օգտագործվելու շինարարական մեքենաների կայանման կամ այլ նպատակներով: Մասնավոր հողերի վրա ազդեցություններ չեն ակնկալվում: Միկրոծրագիրը չի սահմանափակի մարդկանց՝ իրենց տնտեսական ռեսուրսներին հասանելիությունը, ինչպիսիք են հողը, արոտավայրը, ջուրը, հանրային ծառայությունները կամ այլ ռեսուրսները, որոնցից նրանք կախված են: Միկրոծրագիրը չի հանգեցնի բերքի, պտղատու ծառերի և կենցաղային		

	ենթակառուցվածքների ժամանակավոր կամ մշտական կորստի:
Տվյալ ծրագրի տարածքի շրջապատող ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրությունը	Նոր Կյանք բնակավայրը գտնվում է Շիրակի մարզի Արթիկ համայնքում, որը գտնվում է մարզկենտրոնից 16կմ հարավ-արևելք, Մանթաշ գետի ձախ ափին: Առաջարկվող շինհրապարակը գտնվում է Նոր Կյանք գյուղի կենտրոնում: Տարածքում բնակելի շենքեր չկան: Մասնավոր տները տեղակայված են 50մ շառավղով: Հիմնական ճանապարհն անցնում է առաջարկվող շինհրապարակից 30մ հեռավորության վրա: Ռելիեֆի առանձնահատկություններ չկան, տարածքը հարթ է նոսր բուսականությամբ: Նոր Կյանք համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների թիվը 133 է, որից միայն 45-ն է մանկապարտեզ հաճախում: Համայնքապետարանի շենքում տեղակայված մանկապարտեզ հաճախում են հարևան Վարդաքար համայնքի երեխաները, քանի որ Վարդաքարը չունի սեփական մանկապարտեզ: Նոր Կյանք համայնքում կա 1917 թվականին կառուցված քարե շինություն, որը նախկինում օգտագործվել է որպես մանկապարտեզ: Սակայն համայնքի կողմից իրականացված վերանորոգումից հետո շենքը ներկայումս պիտանի չէ որպես մանկապարտեզ օգտագործելու համար: Տեխնիկական նախնական գնահատմամբ պարզվել է, որ մանկապարտեզի շենքի վերակառուցումն անհնար է: Մասնավոր հողերի վրա ազդեցություն չի սպասվում. շինարարության ընթացքում երեխաների, անձնակազմի և համայնքի այլ բնակիչների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակում կիրառվելու են ճանապարհային երթևեկության կանոններ և անվտանգության միջոցներ: Շրջակայքում չկան պատմական շինություններ կամ պահպանվող բնական տարածքներ: Ներկայումս հողատարածքը պարսպապատված է և օգտագործվում է որպես ֆուտբոլի դաշտ, մոտակայքում գտնվող բոլոր կոմունալ հարմարություններով:
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	

Ազգային և տեղական օրենսդրություն և թույլտվություններ, որոնք պահանջվում են ծրագրում	ՀՀ հետևյալ օրենքները սահմանում են իրավական շրջանակը, որը կիրառելի է ծրագրի գործունեության համար. - Մթնոլորտային օդի պաշտպանության մասին ՀՀ օրենքի (1994) «Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նպատակը ՀՀ կառավարության հիմնական սկզբունքների սահմանումն է՝ ուղղված մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ազդեցությունների կանխարգելմանը և մեղմմանը: Սույն օրենքը նաև կարգավորում է արտանետումների լիցենզիաները և ապահովում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի բեռներ / կոնցենտրացիաներ և այլն: Համաձայն այս օրենքի, կապալառուն պարտավոր է իրականացնել շինարարական աշխատանքներ, ինչպես նաև աղբի տեղափոխում և ժամանակավոր պահպանում փոշին և այլ արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: Թափոնների մասին ՀՀ օրենք (2004): Օրենքը իրավական և տնտեսական հիմք է տալիս թափոնների հավաքման, տեղափոխման, հեռացման, մաքրման, վերաօգտագործման, ինչպես նաև թափոնների բացասական ազդեցության կանխարգելման համար՝ բնական պաշարների, մարդու կյանքի և առողջության վրա: Օրենքը սահմանում է պետական լիազոր մարմինների, ինչպես նաև թափոնների արտադրող կազմակերպությունների դերն ու պարտականությունները թափոնների կառավարման գործընթացներում: Համաձայն այս օրենքի, շինարարական գործունեությունից առաջացած թափոնները պետք է վերամշակվեն ըստ անհրաժեշտության կամ տեղահանվեն նշանակված վայրերում: Ընտրված վայրերում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի հեռացումը պետք է գրավոր հաստատվի համայնքապետարանի կողմից: - ՀՀ օրենք՝ Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման և Փորձաքննության վերաբերյալ (2014) Այս օրենքով սահմանվում են այն գործողությունների տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Համաձայն այս նույն օրենքի՝ առաջարկվող աշխատանքները ենթակա չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, շինարարության մակերեսը 1500 մ2-ից պակաս լինելու պատճառով: - ՀՀ Քաղաքաշինության մասին օրենք (1998) Սույն օրենքը սահմանում է ՀՀ քաղաքաշինական գործունեության սկզբունքներն ու կանոնակարգերը: Համաձայն այս օրենքի՝ պլանային աշխատանքների համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն ստանալ:
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ	

Ե՞րբ և ո՞րտեղ տեղի կունենա հանրային քննարկումը	ԲՍԿՊ նախագիծը Կներկայացվի Նոր Կյանք բնակավայրի վարչական շենքում՝ ՀՏՋՀ և տեղի բնակչության մասնակցությամբ նախատեսվող քննարկման ժամանակ: ԲՍԿՊ նախագիծը կհրապարակվի ՀՏՋՀ-ի (www.atdf.am) և շահառուի կայքում (www.artik.am): Նախատեսվող աշխատանքների մասին համառոտ տեղեկատվություն և կոնտակտային տվյալներ՝ հարցերին ու դժգոհություններին անդրադառնալու համար, կտեղադրվեն Նոր Կյանք համայնքի տեղեկատվական տախտակին, շին. հրապարակում և/կամ նրա անմիջական շրջակայքում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1՝ Նկարներ և քարտեզներ

Հավելված 2՝ Սեփականության վկայականի պատճեն

Հավելված 3՝ Շինարարական աղբի տեղափոխման տեղեկանք

Հավելված 4՝ Հանրային քննարկման արձանագրություն

Հավելված 5՝ Շինարարության թույլտվություն

Բ ՄԱՍ: ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի/սոցիալական ցուցանիշներ			
	Գործունեություն/հիմնահարց	**Կարգավիճակ**	**Խթանային գործողություններ**
Արդյոք աշխատանքները կներառի/ կընդգրկի նշվածներից որեւէ մեկը	1. Նոր շինարարարարություն	[+] Այո [ ] Ոչ	Տես ստորեւ Բաժին Ա-ն
	2. Կեղտաջրերի հեռացման առանձին համակարգ	[+] Այո [] Ոչ	Տես ստորեւ Բաժին Բ-ն
	3. Պատմական շենքեր եւ շրջաններ	[ ] Այո [+] Ոչ	Տես ստորեւ Բաժին Գ-ն
	4. Հողի ձեռքբերում	[ ] Այո [+] Ոչ	Տես ստորեւ Բաժին Դ-ն
	5. Վտանգավոր կամ թունավոր նյութեր	[ ] Այո [+] Ոչ	Տես ստորեւ Բաժին Ե-ն
	6. Ազդեցությունը անտառների եւ/կամ պաշտպանված տարածքների վրա	[ ] Այո [+] Ոչ	Տես ստորեւ Բաժին Զ-ն
	7. Բժշկական թափոնների կարգավորում/կառավարում	[ ] Այո [+] Ոչ	Տես ստորեւ Բաժին Է-ն
	8. Երթևեկության եւ հետիոտնային անվտանգություն	[+] Այո [ ] Ոչ	Տես ստորեւ Բաժին Ը-ն
	9. Սոցիալական ռիսկեր	[+] Այո [ ] Ոչ	Տես ստորեւ Բաժին Թ-ն

ՄԱՍ Գ: ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
0.Ընդհանուր պայմաններ	Ծանուցում եւ աշխատողների անվտանգություն	➢ Շինարարական եւ շրջակա միջավայրի տեղական տեսչություններին տեղեկացվել է առաջիկա աշխատանքների մասին: ➢ Հանրությանը համապատասխանաբար տեղեկացվել է աշխատանքների վերաբերյալ (այդ թվում[a] տեղանքի աշխատանքների վերաբերյալ): ➢ Ձեռք են բերվել իրավաբանական բոլոր թույլտվությունները շինարարության եւ/կամ վերականգնման համար ➢ Կապալառուն պաշտոնապես համաձայն է, որ ողջ աշխատանքն իրականացվի ապահով եւ սահմանված կարգով, նվազեցնելով ազդեցությունները հարեւան բնակավայրերի եւ միջավայրի վրա: ➢ Աշխատակիցները պետք է համապատասխանեն միջազգային լավ փարձին (մշտապես սաղավարտներով, անհրաժեշտ դիմակներով եւ անվտանգ ակնոցներով, ամրագոտիներով եւ ապահով երկարաճիտ կոշիկներով): ➢ Տեղանքների համապատասխան ցուցասյուները պետք է տեղեկացնեն աշխատողներին հետեւել հիմնական կանոններին:
Ա. Ընդհանուր շիրարարական պայմաններ	Օդի որակ	➢ Շինարարական աղբը պետք է պահվի վերահսկվող գոտում եւ ցողվի ջրով[a] շինարարական փոշին նվազեցնելու համար: ➢ Շրջակա միջավայրը (մայթեր, ճանապարհներ) պետք է ազատվեն շինարարական աղբից[a] փոշին նվազեցնելու համար: ➢ Տեղանքում բաց վիճակում չպետք է այրել շինարարական թափոններ: ➢ Տեղանքներում չպետք է լինի չափից դուրս շատ չօգտագործվող

		շինարարական փոխադրամիջոցներ:
	Աղմուկ	➢ Շինարարության աղմուկը պետք է սահմանափակվի թույլատրելի սահմաններում: ➢ Աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչները, օդային կոմպրեսորները եւ մյուս մեխանիկական սարքավորումները պետք է փակվեն, իսկ սարքավորումը պետք է տեղադրվի բնակելի վայրերից հնարավորինս հեռու:
	Ջրի որակ	➢ Տեղանքում պետք է սահմանվեն էռոզիայի եւ նստվածքի վերահսկման միջոցառումներ, ինչպես օրինակ[a] հնձած խոտի հակեր և/կամ տիղմային ցանկապատեր, որոնք կանխում են հեռացնել նստվածքը տեղանքից եւ մեծ խտության պատճառ են հանդիսանում մոտակա վտակներում եւ գետերում:
	Թափոնների կառավարում	➢ Թափոնների հավաքման եւ հեռացման ու տեղանքները պետք է հատկացվեն բոլոր տեսակի թափոնների համար, որոնք ակնկալվում են շենքերի քանդման եւ շինարարական աշխատանքներից: ➢ Շենքերի քանդման թափոնները պետք է առանձնացվեն եւ տեսակավորվեն համապատասխան կոնտեյներներում: ➢ Շինարարական թափոնը պետք է հավաքվի եւ համապատասխանաբար հեռացվի հավաքողների կողմից: ➢ Թափոնների հեռացման մասին տվյալները պետք է որպես ապացույց պահպանվեն համապատասխանաբար մշակված կառավարման համակարգում:
Ը. Երթևեկության և հետիոտնային ապահովություն	Շինարարական աշխատանքներով պայմանավորված ուղղակի և անուղղակի վտանգ հանրային երթևեկության և հետիոտների համար	(ա) Պետական նորմերի համաձայն կապալառուն ապահովում է կառուցապատման տեղամասի պատշաճ անվտանգությունը և շինարարության հետ կապված երթևեկության կարգավորումը: Սա ներառում է նաև՝ ▪ նշանների տեղադրում, նախազգուշացնող նշաններ, խոչընդոտներ և շրջանցումներ, տեղամասը պետք է հստակ տեսանելի

		լինի, իսկ հանրությունը պետք է տեղեկացված լինի պոտենցիալ վտանգների մասին, ▪ երթևեկության կառավարման համակարգ և աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես տեղամաս մուտքի և տեղամասի մոտակայքում խիտ երթևեկության մասով: Անվտանգ անցումներ հետիոտների համար այն վայրերում, որտեղ շինարարական աշխատանքների հետ կապված երթևեկությունը խոչընդոտներ է ստեղծում, ▪ աշխատանքային ժամերի համապատասխանեցում տեղական երթևեկության մոդելին. օրինակ, ծանրաբեռնված ժամերին կամ խոշոր եղջերավոր անասունների շարժի ժամանակ խուսափել խոշոր տրանսպորտային աշխատանքներից, ▪ երթևեկության ակտիվ կառավարում տեղամասում՝ պատրաստված և տեսանելի աշխատողների կողմից, եթե դա անհրաժեշտ է հանրության հարմարավետ երթևեկության համար, դեպի այլ օբյեկտներ, խանութներ, բնակելի տներ անվտանգ և անխափան մուտքի ապահովում վերանորոգման աշխատանքների ընթացքում, եթե տվյալ շինությունները բաց են հանրության համար:
Թ. Սոցիալական ռիսկերի կառավարում	Հանրային կապերի կառավարում	Շինարարն ունի տեղական հետադարձ կապն ապահովող անձնավորություն ով նշանակված է ապահովելու տեղական բնակչության հետ հաղորդակցությունը և առաջարկություններ/բողոքներ ստանալը (ա) Տեղական բնակչության հետ իրականացվել են խորհրդակցություններ նույնականացնելու և ակտիվ ձևով կառավարելու տեղական բնակչության և դրսից բերված աշխատուժի միջև ծագող

		հնարավոր կոնֆլիկտները (բ)Կապալառուն բարձրացնում է տեղական բնակչության իրազեկվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ , որոնք կարող են կապված լինել դրսից բերված աշխատուժի հետ (գ) Բնակչությունը համապատասխան դեպքերում իրազեկված է շինարարական աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ, ծառայությունների կասեցման, երթեկության տարանցիկ ուղիների և ավտոբուսների ժամանակավոր կանգառների, պայթեցման և քանդման աշխատանքների մասին, (դ) Շինարարական աշխատանքները չեն իրականացվում գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում գիշերային աշխատանքների համար կկազմվեն պատշաճ ժամանակացույցեր և համայնքները պատշաճ կերպով կտեղեկացվեն այդ մասին, այնպես որ հնարավոր կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ: (ե) Ցանկացած ծառայության դադարեցումից նվազագույնը հինգ օր առաջ (ներառյալ ջուր, էլեկտրոէներգիա, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ), համայնքի անդամները իրազեկվում են նախօրոք ծրագրի վայրում, ավտոբուսային կագառներում և ազդակիր տներում հայտարարությունների միջոցով:
	Բողոքների Լուծման Մեխանիզմի (ԲԼՄ) կառավարում	(ա) ԲԼՄ-ն ստեղծվել և գովազդվում է տեղական մակարդակում: Կապալառուն տեղեկացվում է ստացված բանավոր և ոչ բանավոր բողոքները գրանցելու և ԾԻԳ-ին

		հայտնելու իր պատասխանատվության մասին: (բ) ԲԼՄ կոնտակտային տվյալները, ներառյալ տեղական կենտրոնական կետերը, տեղադրվել են շինհրապարակում և տեղական համայնքի վարչական գրասենյակում: (գ) ԲԼՄ տեղական համակարգողը ստանում և գրանցում է բնակչության բողոքները ԲԼՄ մատյանում և պարբերաբար հաղորդում է բողոքները ԾԻԳ-ին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Գործունեություն	**Ի՞նչ** (պարամետր է վերահսկվելու)	**Որտե՞ղ** (է պարամետրը վերահսկվելու)	**Ինչպե՞ս** (է պարամետրը վերահսկվելու)	**Ե՞րբ** (սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը)	**Ինչու՞** (է պարամետրը վերահսկվելու)	**Ո՞վ** (է պատասխանատու պարամետրի վերահսկման համար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
1. Շինարարական նյութերի մատակարարում	Շինարարական նյութերի գնումը արտոնագրված մատակարարներից	Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրերի	Փաստաթղթերի ստուգում Նյութերի որակի ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Ապահովել շինարարության տեխնիկական որակը Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը	ՀՏՋՀ Տեխնիկական վերահսկողություն
2.Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական սարքավորումների տեղաշարժ	Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը Բեռնատար մեքենաների և բեռի համապատասխանություն, բաց մեքենաներով տեղափոխվող բեռի ծածկում Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով	Շինարարական նյութերի և շինարարական թափոնների փոխադրման համար երթուղիներ	Շինարարական վայրին հարակից ճանապարհներում դիտազննում ներառյալ նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիները	Շինարարության ամբողջ ընթացքում	Խուսափել փոշուց և կոշտ թափոններից օդի և ճանապարհների աղտոտվածությունից Նվազեցնել ճանապարհային խոչընդոտները	ՀՏՋՀ, Ճանապարհային ոստիկանություն Բյուրեղավան համայնք
3. Շինարարական սարքավորումների պահպանություն	-Լվանալ ավտոմեքենաները և շինարարական սարաքավորումները շինարարական հրապարակից դուրս կամ բնական հոսքերից	Շինհրապարակ	Գործողությունների ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	- խուսափել սարքավորումների շահագործման պատճառով ջրի և հողի աղտոտումից նավթամթերքներով	ՀՏՋՀ Տեխնիկական վերահկող

	- Սարքավորումների վառելիքի լցոնում կամ յուղում շինհրապարակից դուրս կամ կանխորոշված սահմանափակ տարածքում				- հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել սպասվող վնասը	
4. Երթևեկություն և ճանապարհային անվտանգություն	- Անհրաժեշտության դեպքում երթևեկության և ճանապարհային նշանների առկայություն. - Շինհրապարակը սահմանազատված է/ցանկապատված է, և բոլոր շինարարական աշխատանքները սահմանափակված են տեղանքով - Շինարարական նյութեր և թափոններ չեն կուտակվում կամ ցրվում շինհրապարակից դուրս:	Շինարարական հրապարակ և շրջակա տարածք	Գործողությունների ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	- Ապահովել հանրության անվտանգությունը և զգուշացնել բոլոր հնարավոր վտանգների մասին. - Կանխել շինարարական աշխատանքների պատճառով ուղևորների և/կամ հետիոտների շահերի խախտումը.	
5.Շինարարական թափոնների կուտակում	Ֆորմալ ձևավորված աղբավայրերի ժամանակին մաքրում	Շինարարության վայր և հիմք (եթե կիրառելի է) Աղբի տեղափոխության համար ձևավորված աղբավայրեր	Ստուգաթերթեր Դիտազննում	Շինարարության ամբողջ ընթացքում	Խուսափել շրջակա միջավայրի աղտոտումից	ՀՏՋՀ,
6.Կենցաղային աղբի առաջացում	Աղբարկղերի ապահովում, թափոնների տեղադրումը տեղում: Թափոնների կանոնավոր տեղափոխության շուրջ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնություն	Շինարարական հրապարակ	Դիտազննում	Շինարարության ամբողջ ժամանակահատվածում	Խուսափել կենցաղային աղբի պատճառով հողի եւ ջրի աղտոտվածությունից,	ՀՏՋՀ

7.Աշխատանքի անվտանգություն	Աշխատողներին հատուկ համազգեստի և պաշտպանական միջոցների տրամադրումը և դրանց կիրառման պարտադրում կառուցապատողին Շինարարական սարքավորումների օգտագործման և շահագործման կանոնների անվտանգության պահպանման միջոցառումների հետևում	Շինարարական հրապարակ	Գործունեության ստուգում	Շինարարության ամբողջ ժամանակահատվածում	Նվազեցնել պատահարների հավանականությունները	ՀՏՋՀ Տեխնիկական վերահկող
8. Հողային աշխատանքներ	- Հողի վերամշակման համար վերգետնյա շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում - Հանված հողի ժամանակավոր պահպանում սահմանված վայրերում - Հանված հողի հետլիցք ըստ անհրաժեշտության և ավելցուկային զանգվածի տեղաբաշխում տեղանքում ՝գրավոր հաստատված	Շինարարական հրապարակ	Գործունեության ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	-սահմանափակել բուսականության կորուստը հողերի կոյտերի պատճառով և մակերեսային ջրերի աղտոտումը մասնիկներով նվազագույնի հասցնել -Սահմանափակել մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը հողով	ՀՏՋՀ Տեխնիկական վերահկող
9.Ներտ նյութերի արդյունահանում	- առկա մատակարարներից ներտ նյութերի գնում, եթե այդպիսի հնարավորություն կա - ներտ նյութերի արտադրության լիցենզիայի ստացում և լիցենզիայի խստիվ պահպանում - քարերի տեռասավորում, շահագործվող տարածքների հետլիցք և լանդշաֆտի հետ ներդաշնակեցում - Ջրային հոսքից դուրս մանրախճի փորում, ջրահոսքի և փորման տարածքի միջև բաժանարար լեռնաշղթաների կազմակերպում, տրանսպորտային միջոցներով և մեքենաներով ջրերի մուտքի արգելում:	Շինարարական հրապարակ	Գործունեության ստուգում	Փորման և վերականգման աշխատանքների ժամանակ	- Սահմանափակել լանջերի էրոզիան և լանդշաֆտի վնասումը - Սահմանափակել գետերի ափերի էրոզիան, կշռված մասնիկներով ջրի հոսքի աղտոտումը և ջրային կյանքի խանգարումը	ՀՏՋՀ Տեխնիկական վերահկող
10. Շինհրապարակների վերամշակումը և	Անհրաժեշտության դեպքում, շինհրապարակի և մշտական մուտքի	Շինհրապարակ և մուտքի	Զննում և	Շինարարության վերջնական	Նվազագույնի հասցնել լանդշաֆտի	ՀՏՋՀ Տեխնիկական

կանաչապատումը	ճանապարհների և տարածքի կանաչապատում և ավարտական մաքրում	ճանապարհներ	փորձաքննություն	փուլում	գեղագիտական արժեքի կորուստը շինարարական գործունեության արդյունքում	վերահկող
11. Պատահական գտածոների հայտնաբերում	- Պատահական գտածոների հանդիպելիս աշխատանքների անհապաղ դադարեցում - Պատահական գտածոների վերաբերյալ պաշտոնական հաղորդակցություն ՀՀ Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության գործակալության հետ - Պահանջվող պեղումների և տեղանքի պահպանման համար ժամանակին ձեռնարկված միջոցառումներ:	Շինարարական հրապարակ	Զննում և փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	Ապահովել, որ մշակութային ժառանգությանը չվնասեն շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՏԶՀ Տեխնիկական վերահկող Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն
13. Շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների ոչ պատշաճ կայանման, շինանյութի և թափոնների ժամանակավոր պահեստավորման կամ կապալառուների կողմից շինհրապարակում աղբ թափելու հետևանքով հարակից բնակիչների համար անհանգստություն	- շինհրապարակից դուրս շինարարական մեքենաների և մեքենաների կայանում չիրականացնել - շինհրապարակի հետիոտնային և տրանսպորտային միջոցների շարժի արգելափակում՝ շինանյութերի / թափոնների կուտակման / թափման պատճառով - Կապալառուի անձնակազմի կողմից շինհրապարակի տարածքում մասնավոր հողամասերի և (կամ) այլ գույքի խախտում թույլ չտալու համար	Շինհրապարակի անմիջական հարևանությամբ	Տեսողական ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Կանխել բացասական ազդեցությունները գույքի, ակտիվների կամ ապրուստի միջոցների վրա	ՀՏԶՀ Տեխնիկական վերահկող
14. Շինարարական աշխատանքների և շինհրապարակի կազմակերպում	- Աշխատանքային ժամերի պահպանում (09:00-18:00); - Աշխատավայրի սահմանազատում և ցանկապատում; - Նախազգուշական նշանների տեղադրում և տեսանելիություն՝ հանրությանը բոլոր հնարավոր վտանգների մասին	Շին. հրապարակ	Տեսողական ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Ապահովել հասարակական անվտանգությունը և նվազագույնի հասցնել քաղաքացիական աշխատանքների հետևանքով առաջացած	ՀՏԶՀ Տեխնիկական վերահկող

	նախազգուշացնելու համար. - Շինհրապարակ մուտքի սահմանափակում միայն շինարարական աշխատանքների իրականացման մեջ ներգրավված լիազորված անձնակազմի համար. - Շինհրապարակ մուտքի մոնիտորինգ; - Հետիոտների համար անվտանգ անցումների ապահովում.				անհանգստությունը	
15.Բողոքների լուծման մեխանիզմի գործածում	Ենթածրագրի վերաբերյալ բողոքների կամ հարցերի վերաբերյալ հանրային իրավունք: Դիմում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարին (համայնքային իշխանություններին): Բողոքների համակարգողի նշանակում (բողոքների ստացում, վերանայում և բացատրություն, բողոքների գրանցքում մատյանում և փորձ լուծել դրանք ոտքի վրա): Բողոքատուն կարող է դիմել անմիջապես ՀՏՋՀ՝ թեժ գիծ ծառայության (010 24 01 59), փոստային նամակի (Երևան 0037, Կ. Ուլնեցի 31), էլեկտրոնային նամակի (support@atdf.am).կամ ՀՏՋՀ-ի կայքում տեղադրված գործիքի միջոցով (http://atdf.am/hy/Home/ContactUs):	Շին հրապարակ	Փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	Բողոքի քննարկում և լուծում 2 շաբաթվա ընթացքում: Խնդրի լուծման ձախողման դեպքում նախարարության կամ իրականացնող կազմակերպության մակարդակում, ԾԱԵԱ-ն կարող է դիմել դատարանին որոշման կայացման համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն	ՀՏՋՀ Տեխնիկական վերահսկող
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ						
1.Կենցաղային աղբի հեռացում	- Ապահովվում է մանկապարտեզի շահագործման ընթացքում առաջացած կենցաղային աղբի կանոնավոր հավաքում և հեռացում; -Կենցաղային աղբը մանկապարտեզից	Համայնքապետարան	Մանկապարտեզի տարածքի վիզուալ ստուգում	Մանկապարտեզի շենքի շահագործման ընթացքում	-Ապահովել լավ սանիտարական պայմաններ մանկապարտեզի համար	Նոր Կյանքի վարչական գրասենյակ Նոր Կյանքի

	դուրս բերելու համար մշակված և գործող պայմանավորվածություններ կան					մանկապարտեզի տնօրինություն
2. Կաթսաների և ջեռուցման համակարգի անվտանգ շահագործում և պահպանում	Պարբերաբար իրականացվում է կաթսաների և ջեռուցման համակարգի սպասարկում	Մանկապարտեզի տարածք	Պարբերական ստուգում	Ջեռուցման համակարգի շահագործման ընթացքում	Պահպանել ջեռուցման համակարգի և կաթսաների անխափան աշխատանքը	Նոր Կյանքի մանկապարտեզի տնօրինություն
3 .Ներքին հաղորդակցության համակարգ	Էլեկտրական լարերը և ջրի/կոյուղու խողովակները պահպանվում են լավ վիճակում	Մանկապարտեզի տարածք	Պարբերական ստուգում	Ջեռուցման համակարգի շահագործման ընթացքում	Բացառել էլեկտրական ցնցումների, կարճ միացումների և խողովակների արտահոսքի ռիսկերը	Նոր Կյանքի մանկապարտեզի տնօրինություն
4. Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներին	- Հրդեհի ազդանշանման և հրդեհի տեղայնացման համակարգի և էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման վթարային պահեստային համակարգերի առկայություն	Համայնքապետարանի տարածք	Համայնքապետարանի տարածքի վիզուալ ստուգում	Համայնքապետարանի շենքի շահագործման ամբողջ ընթացքում	- Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և այցելուների համար - Խուսափել համայնքապետարանին մատուցվող ծառայությունների ընդհատումից	Ներքին գործերի նախարարություն Համայնքապետարան
5. Կեղտաջրերի մաքրման կայանի շահագործման և պահպանման ապահովում	- Կեղտաջրերի հոսքը դեպի մաքրման կայան անխափան է և խուսափում են արտահոսքերից. - Մաքրկան կայանը ստանում է կանոնավոր սպասարկում և մնում է լավ գործառնական ռեժիմում.	Կեղտաջրերի սխեման և մաքրման կայանի տարածք	Անցկացնել մաքրված կոյուղաջրերի որակի փորձարկում՝ համաձայն հաստատված անվտանգության պարամետրերի	Մաքրման կայանի շահագործման ամբողջ ընթացքում	- Կանխել ջրածածկումը, ջրից առաջացած հիվանդությունների տարածումը և տհաճ հոտից առաջացած անհանգստությունը. - Կանխել մակերեսային և	Նոր Կյանքի վարչական գրասենյակ Նոր Կյանքի մանկապարտեզի տնօրինություն

					ստորերկրյա ջրերի, հողերի աղտոտումը.	

Հավելված 1՝ Նկարներ և քարտեզներ





Հավելված 2՝ Սեփականության վկայականի պատճեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 15 սեպտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Նոր Կյանք 4-րդ փողոց 10 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1862-Ն և ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավարի 01/09/2021թ. թիվ 36-Ա որոշումներ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-087-0033-0020

Մակերեսի չափը (հա)՝ 0.38824

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 15092021-08-0010, գաղտնաբառ՝ 8WU4BQVEGH8M

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

էջ 1/2



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարեն Մանուկյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի տեղեկատու

ՎԿԱՅԱԿԱՆ N 15092021-08-0010, գաղտնաբառ՝ 8WU4BQVEGH8M

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Հավելված 3՝ Շինարարական աղբի տեղափոխման տեղեկանք

05553661
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ г.АРТИКА
REPUBLIC OR ARMENIA
MARZ OF SHIRAK
MUNICIPALITY OF ARTIK
№ 298
«15» 05 2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Արթիկ համայնքի <<Նոր Կյանքի նախակրթարան>> ՀՈԱԿ-ի շինարարական աշխատանքների համար համայնքապետարանը շինաղբի տեղափոխման համար վայր է տրամադրել մինչև 3 կմ հեռավորության վրա Նոր Կյանք գյուղում գտնվող լքված քարհանքերի տարածքում:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայր

15.05.2023թ.

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Ա.Գրիգորյան
կատարող՝ Ս.Տոնոյան
0244-5-20-21

Հավելված 4 Հանրային քննարկման արձանագրություն

2023 թվականի հունիսի 29-ին Նոր Կյանք բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ հանրային քննարկման հանդիպում՝ ՀՏՋՀ-ի, Արթիկի խոշորացված համայնքի և Նոր Կյանքի վարչական գրասենյակների ներկայացուցիչների և Նոր Կյանք բնակավայրի բնակիչների մասնակցությամբ: Հանդիպմանը ընդհանուր առմամբ մասնակցել է 26 մարդ, որոնցից 19-ը՝ կանայք:

Հանրային քննարկման մասին հայտարարությունը տեղադրվել է Նոր Կյանք բնակավայրի կայքէջում և Ֆեյսբուքյան էջում 2023 թվականի հունիսի 23-ին:

Հանդիպումը բացեց Արթիկ համայնքի վարչական գրասենյակի զարգացման նախագծերի բաժնի պետ Մովսես Մովսիսյանը և ներկայացրեց հանդիպման նպատակը և միկրոնախագծի հայեցակարգը:

ՀՏՋՀ գնահատման ինժեներ Կարեն Հարությունյանը ներկայացրեց նախագծային փաթեթը և լուծումները, ներառյալ նոր շենքի հզորությունը, գլխավոր հատակագիծը, չափսերը,

հաղորդակցությունները: Ներկայացվեց շինարարական աշխատանքների մոտավոր տևողությունը, որը 470 օր է: Հակիրճ ներկայացվեցին շինարարական ընկերության մրցույթի ընթացակարգը և տևողությունը:

ATDF-ի շրջակա միջավայրի մասնագետ Ասյա Օսիպովան ներկայացրեց շինարարական աշխատանքների հետևանքով սպասվող ժամանակավոր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, ներառյալ շինարարական թափոնների առաջացումը և տեղափոխումը, աղմուկի և փոշու առաջացումը: Ներկայացվեցին նաև ապահովվող անվտանգության միջոցառումները, ներառյալ շինհրապարակի ցանկապատումը, շինհրապարակի վտանգավոր տարածքներում նախազգուշական ժապավենների տեղադրումը և երթևեկության կառավարումը, ինչպես նաև անվտանգության նշանների տեղադրման պահանջները: Ներկայացվեցին աշխատանքի անվտանգության միջոցառումները, ներառյալ համազգեստի կրումը և անհատական պաշտպանիչ միջոցները, ինչպես նաև շինարարական նյութերի մատակարարման և շինարարական սարքավորումների սպասարկման պահանջները:

ATDF-ի սոցիալական մասնագետ Քնարիկ Գրիգորյանը ներկայացրեց, որ նախագծի շրջանակներում չեն նախատեսվում բացասական սոցիալական ազդեցություններ, ներառյալ հարկադիր վերաբնակեցումը կամ ժամանակավոր հողօգտագործումը շինարարության ընթացքում: Նշվեց նաև, որ չնայած հողամասը հարմար է շինարարական աշխատանքների իրականացման համար, և տեղադրվելու են ժամանակավոր ցանկապատ և նախազգուշական նշաններ, երեխաների մուտքը շինհրապարակ խստիվ արգելվում է:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց SILD նախագծի բողոքների լուծման մեխանիզմը (BRM): Ներկայացվեցին համայնքի ընդհանուր ժողովում ընտրված տեղական համակարգողի (Մովսես Մովսիսյան) կոնտակտային տվյալները: Ներկայացվեցին բողոքների ներկայացման, քննարկման և վերանայման ընթացակարգերը: Նշվեց, որ ԲՄՀ-ի վերաբերյալ տեղեկատվությունը լրացուցիչ կտեղադրվի Նոր Կյանքի վարչական գրասենյակի տեղեկատվական տախտակին և շինհրապարակի մուտքի մոտ տեղադրվելիք միկրոնախագծի տեղեկատվական տախտակին:

Նշվեց ԲՍԿՊ-ով նախատեսված միջոցառումների իրականացման վերահսկողության և մոնիթորինգի ընթացակարգերը:

Հավելված 5՝ Շինարարության թույլտվություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 43/23 04 հուլիսի 2023 թ.

Տրված է կառուցապատող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք գյուղի մանկապարտեզի կառուցման ծրագրի կոմիտե -ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայական համարը,

Արթիկ համայնք, գյուղ Նոր Կյանք 4-րդ փողոց 10 հասցե (կադ.ծածկագիր 08-087-0033-0020) հասցեում գտնվող

կառուցում (քարձր դիակայունության,IV կառուցվածք)
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը) (օբյեկտի անվանումը, դիակայունության աստիճանը (կառուցվածքի),

մինչև 1300 քմ ընդհանուր մակերեսով նկուղային հարկով երկհարկանի մանկապարտեզի կառուցում օբյեկտի
հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

նոր կառուցման շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են <<ԱՐՄԱՏՐՈՅ>> ՍՊԸ
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

լիցենզիա ՔՊԼ 16921 կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) 20.12.2022 թվականի փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
համալիր փորձաքննություն
(նշել փորձաքննության տեսակը)

<<ՊԵՏԱՐՏՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ լիցենզիա ՔՊԼ 17074 կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների
Արթիկի համայնքապետարանի հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. **Շինարարական աշխատանքներն իրականացնել 3 (երեք) տարվա ընթացքում՝**
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից 5-օրյա ժամկետում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության մասին մասնակցությունը բաղկացած է _____ էջից, կարված և դրոշմակնքված է _____ Արթիկի համայնքապետարանի _____ կողմից:
(Իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են կատարվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում _____
կողմից
(Նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, փոստային հասցեն)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ
(Ըստ իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____ հետ:
(Ըստ օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____
_____ :
(Ըստ են նախագծանախահաշվային հոդվածի շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) _____ քանդման՝
(Ներառյալ ավարտված կառուցման օբյեկտները՝ ըստ հասցեների, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջ (օգտագործողին), _____ վկայական N 15092021-08-0010 _____
(կնքում է անհատական դրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:
(Նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝

Ա.Ոսկանյան
(Անունը, ազգանունը)